

## ՎԼԱՍԴԿԱՌՆԻԱՑԻ

ՎԵՆԵՏԿԵԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐ ՃԶ ԴԱՐՈՒՆ

(Տես յ'էլ 345)

### ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Անյաշող խորագիտուրիշն

Վենետկոյ հասարակապետութեան պալտօնեայք, ճշմարիտ և կամկար ծիօթ եղեանաւոր համարուածներուն վրայ ամէն տեսակ փորձ 'ի գործ դընելէ վերջը, որովք կը ջանային ոցա բերնէն իրենց վրայօք եղած ամբաստանութեան խոստովանութիւնը կորզել, կը դիմէին ճարտար և շատ անգամ յաջող խորագիտ հնարից. և երբ այս վերջիններս 'ի զուր ելլէին, այն ժամանակ ամբաստանեալն տանջանաց բարրարոս փորձին կ'ենթարկեին,

Այս վատահամբաւ պատիճս, զոր հնարեր են յայտնապէս բռնաւորք, և զոր 'ի գործ դրեր են եթէ աշխարհական և եթէ եկեղեցական դատաստանարանը, մինչեւ անցիալ դարուն վերջերը, (յունանց նաև մինչեւ ներկայ դարուն սկիզբները), կը ցուցընի յայտնի կերպով թէ միշտէս այն դարերն անգութ չ չարսիրա էին, և թէ ինչպէս մարդկային ազգի բարոյականութիւնն գեր չատ հնորի էր ազգելու դատաւորաց սրտին մէջ այն մարդասէր զգացմոննը, որ յետոյ տարեաց շրջաններ վրայ անցնելով, հասաւ մինչեւ այն աստիճանին՝ որ ոչ միայն ննջեց այս բարրարոս փորձերը, այլ նոյն իսկ նաև մահուան պատի'ը. խորհրդածելով որ նոյնն թէ մարդկային և թէ միանգամայն աստուածապահին օրինաց գէմ էր, որովհետեւ մարդս չունի իշխանութիւն բառնալու ինչ որ չէ կարող չնորհել.... Բայց մենք գառնանք մեր պատմութեան,

Ուստի, նախ քան մասնելու զլիկտորինէ տանջանաց պատժոյն, ուզեց Քառասմց Ատենապետն 'ի փորձ գնել իւր սովորական խորագիտութիւնն ենքն մէկը,

Այս պատճառաւ ուրեմն, առաւտօտ մը, չարասիրտն ձէլթուտ, կեղծաւորութեամբ սկեր հագուած, բանտապահին ներկայանալով՝ յանձնեց թուզը մի. զոր երբ կարդաց պահապանն՝ իտնարհաբար ձռեցաւ, և առաջ նորդեց ձէլթուտի այն առանձնախորչը՝ ուր փակուած էր դժբախտ վիկտորիէն. Մութ խղիկին գուռը բանալով վառեց ջահ մը, և բանտին մէջ մտնելով ըստա բանտարկելոյն.

— Տիկին, կնիկ մը կը փափաքի բեզի հետ խօսակցիլ.

Այս ըսելով պահապանն՝ թողուց ջակը բանտին մէջ և բաշուեցաւ. ձէլթուտի երենալն բանտարկելոյն զարմանք ազդեց. և նեղ խղիկին մէջ տեղը կանգ առնելով՝ ըստա.

— Դժու այս տեղ....

— Այս, Վիկտորինէ. իմ մայրենի սէրս մղեց զիս այս խօսակցութիւնս ուզելու, ուստի կրնայ կախուած լինել թէ՛ քու և թէ իմ երջանկութիւնս:

— Խօսէ տիկին. պատասխանեց բանտարկեալի:

— Խօսելիքս կարճ կը կապեմ, ըստ ձէլթրուտ, ըստ ամենայնի հաւատարիմ մնալով՝ ինչ որ իրեն պատուիրեր էր Քառասանից գլխաւորն. — Եւ լաւ մը զննելով ամբաստանելով դէմքը իրեն խօսերուն գործած աղդեցութիւնն իմանուու համար, աւուցուց. Գու վրա դրած հմ բունդակ յոյս:

— Ի՞մ վրաս, պատասխանեց Վիկտորինէ ապշած, գեա չհասկենապով այս կատակերգութեան հանգոյցը: — Բայց ինչպէս, ինչ կերպով:

— Ես մայր եմ. և ինչ որ ես քեզի, գէմ գործեցի, նոյնը նաև գուն պիտի գործէիր ինծի գէմ, եթէ իմ դիրքիս մէջ լինէիր: Ուստի եթէ որ և իցէ միջոց ՚ի գործ կը զնեմ որդիս զանելու համար, պէտք չէ որ քեզիէն ատելութեան և կամ մեզադրութեան ենթարկուիր, ըստ ձէլթրուտ:

— Բայց, արկին....

— Թող որ խօսիմ, վրայ բերաւ ձէլթրուտ. իսկ եթէ վրէժխնդրութեան և կամ արծաթսիրութեան ոգւով մղեալ՝ ի գործ դրիր այդ եղեննագործութիւնն....

— Տիկին... գոչեց Վիկտորինէ զայրացած: Բայց միւսն առանց ուշ՝ գընելու շարունակեց.

— Եթէ մօրեցորդ ժառանգութիւնը ձեռք բերելու նպատակաւ, որ գիտէիր թէ որդւոյս մահուընէն վերջը քեզի պիտի մնայ, այս խեղճ տղան սպաննեցիր, հիմա քու ձեռքի է այդ շարեաց դարման տանիլ, զոր պահով եմ թէ մտաց այլայլութեան վայրկենի մը մէջ միայն գործեցիր:

— Ա, ու անարժան կասկածովդ, տիկին, հիմա զիս ամէն բանէ աւելի կը նախատես, պատասխանեց Վիկտորինէ. ։ ասան զի այս տեղերուն մէջ ալ եկած ես թշնամանելու զթշուառութիւնն, ուր պէտք էր յարգել գէթ եղեկելուց մը ցաւը, որ բռնաւելու է կրելու անիրաւ պատիժ մը, որոյ միակ պատճանն է անզգամ զրպարուութիւնդ:

— Պուն ալ մայր ես, Վիկտորինէ. և եթէ գային քեզի իմացընէին որ որդիդ յափշտակուած և կամ սպանուած է, ինչ պիտի ընէիր, հարցուց ձէլթրուտ:

— Ես. ես ցաւէս կը յիմարէի, ըստ Վիկտորինէ:

— Եւ միթէ ամէն միջոց ՚ի գործ պիտի չշնէիր զինքը վերահաս մահուընէ ազատեւ, համար. եթէ դիպուածով ողջ լինէր, հարցուց ձէլթրուտ:

— Ո՛հ, յայտի է թէ այժ:

— Ուստի գուն՝ զքբէ հիմ տեղս դիր, և մտածէ որ ես մայր եմ, և քեզի գէմ՝ ի գործ դրած իրաւունէ իիսաւ, բայց պարագայէն պահանջուած այսպիսի վարմամբ հանդերձ, իմ սիրտս ոչ թէ ատելութիւն կը մնուցանէ քեզի գէմ, այլ ընդհակառակն ներողամուութիւն: Ըսէ ուրեմն, ինչ ըրիք իմ որդիս, ուր է հիմա ինքն. և ես կը խոստանամ իմ պաշտպանութիւնս, քեզի գէմ սկսուած զատաստանը խափանելու համար: Գու խոստովանութիւնդ ուրեմն կարող է միայն չնորհել ինձ այն երջանկութիւնն զոր ինձմէ յափշտակեցիր, և քեզի այն պատասխութիւնն զոր կորսընցուցիր:

— Քիչ մառաջ ըստի, տիկին, որ քեզ նման ես ալ մայր եմ, հետեարար չեմ կրնար հանկընալ թէ ինչպէս կրնաս ենթագրել, նոյն իսկ վայրկեան մի միայն, թէ ես այդպիսի պժգալի եղեռնագործութիւն մի կատարած լինիմ: Ոչ. տիկին. մի կասկածիր. այդպիսի կասկած՝ նոյն իսկ բնու-

թեան գէմ նախատինք մ'է . զամն զի լւա գիտնալով թէ որպիսի մեծ է մօր մը՝ իւր արգանդին պլողոյն վրայ ունեցած սէրն, նոյն իսկ ընութիւնն ինքն-իրեն հակառակ պիտի կանգնէր, եթէ ուզտ լինէի շաղախնել ձեռքիրս այն անմեղին արեամբ : Ոչ, տիրին, զայդ մի պնդեր . մայր մը՝ չի կրնար և ոչ իսկ կասկածել, որ ուրիշ մայր մը՝ այդպիսի սպանութիւն կարող եղած լինի կատարել :

Այս գժրախտն այնքան անկեղծ էր, որ չէր անդրագառնար իւր գէմ հը-նարուած գաւն . բայց իւր խիզն այնքան մարտոր էր, որ առանց իւր ուզե-լուն, բերանը կը գնէր իւր դատին պարզ ճշմարտութեան պաշտպանու-թիւն :

— իրաւ է, պատասխանեց ձէլթրուտ կեղծաւորութեամբ, չիմ կրնար ժխտել որ բսածներգ անուրանալի ճշմարտութիւնը են : Հաւատա որ ամ բողջ ունեցած կը բաշխէի անոր որ իմ՝ որդիս ինծի դարձնէր :

— Հարկ չկայ որ զայդ ըսես, պատասխանեց Վիկտորինէ, ամէն մարդ համոզուած է ըսածիդ :

— Եւ եթէ այդ ալ բաւական չլինէր, շարունակեց ձէլթրուտ, աւելի ևս առջի բսածն հաստատելով, ով որ ալ լինէր յանցաւորն՝ առանց պատմի պիտի մնար, զամն զի եթէ ազատ է և ոչ իսկ անունը պիտի տամ . իսկ եթէ արգարութեան ձեռքն ընկած լինի՞ իւր գէմ եղած վրէժինդրութեան վճիռը չնչն պիտի տամ :

Այս կերպով խօսակցութիւնը վերջացրնելն իրաւցընէ խորամանկու-թեան քաջարուեստ հնարք մէր, բայց Վիկտորինէ, որոյ խիզն բնաւ խայթ չունէր, պարզօքն պատասխանեց :

— Կը փափարիմ, տիկին, որ սրտիդ իզձերը կատարուին . գէթ այսու ես ալ բանտին մէջ կրած թուուառութեանցո վերջը կը գտնէի, ուր առողջու-թիւնս կարգէ գուրք կը վկասուի, և ամէն մէկ օրը որ կ'անցնի՞ իմ պատույս վրայ մէկ մէկ րիծ կ'անցնայ :

— Բայց մինչեւ որ յանցաւորն չյայտնուի, գժրախտաբար պիտի չարչըր-կուիդ դու այս ահաւոր ընակարանին մէջ, պատասխանեց ձէլթրուտ :

— Մեծապէս վատահ եմ որ անմեղութիւնս պիտի հրատարակուի դատա-ւորներէս, որով և քիչ ատենէն ազատութիւնս պիտի ձեռք ձգեմ :

— Կը խարուխ, ըսաւ ձէլթրուտ դառն ատելութեամբ, աեսնելով որ իւր յոյսն ՚ի գերեւ ելած էր և իւր փափաքած խոստովանութիւնը երազած իր մը գարծաւ :

— Խչու համար, հարցուց Վիկտորինէ :

— Վասն զի արտաքին փաստերը քեզդ զէմ են :

— Բայց նաև շատ անգամ սիսալ կրնան լինել . և իրաց ճշմարտութիւնն զանոնք սուստ պիտի հանէ . և իմ անմեղութիւնս ամենուն առջն պայծառ պիտի ծագի՛ լուսաւոր արեգական պէս :

— Այս . բայց զիտես թէ ինչ միջոցներով պիտի ծագի այդ փափաքած լոյ-սրգ, ըսաւ ձէլթրուտ ատելութեամբ :

— Աստուծոյ օգնութեամբ և դատաւորներուս իմաստութեամբ, պատաս-խանեց անհողարար բանտարգեալն :

— Ոչ մէկով և ոչ մի սով, վրայ բերաւ ձէլթրուտ, այլ միայն տանջան-քով, որ միակ հնարք է յանցաւորաց բիրնէն գուրս հանելու այն եղերանց խոստովանութիւնը, զորս ծածկել կը ջանան կեղծեօթ, իբրև զոհ մը, իբրեւ անմեղ մը բողոքելով :

— Տանջանքով, հարցուց Վիկտորինէ զարհուրած :

- Այս, աւելցուց ձելթրուտ, կը սարսափեցրնէ գքեղ, հա՞—  
 — Ո՛հ, Տէ՛ր Աստուած, Տէ՛ր Աստուած, տանջանքր... գոշեց Վիկտորի-  
 նէ, երկու մեռօք երեսը գոցելով և վախէն դող երած:  
 — Խոստովանէ ուրեմն, կրկնեց այն ատեն վրէժխնդիր կինն. խոստովա-  
 նէ յանցանք, և չարչարանքն քեզի կը ինայուի:  
 — Բայց ես խոստովանելու բան չունիմ, տիկին:  
 — Այս ատեն պիտի մեռնիմ. վրայ բերաւ խղդուկ ձայնով ձելթրուտ,  
 մեկնիլ ձևացնելով:  
 — Բայց, տիկին, Աստուծոյ սիրոյն համոր կ'ազաշեմ, ըստ բանտարկեա-  
 լը՝ ձեռքերն իրարու բերելով, գուն միայն կրնաս զիս ազատել: Կ'աղաշեմ  
 մի թողուր զիս դահճին ձեռքը. չեմ կրնար այն զարհուրելի պատճոյն  
 դիմանալ:
- Այս ատեն խոստովանէ, կրկնեց ձելթրուտ, կարծելով որ սարսափե-  
 ցուց իւր զոլը. այս միջոցը միայն կը մնայ քեզի՝ սարսափելի տանջանքէն  
 ազատելու համար:
- Ուրեմն զիս եղեռնագործ կը համարիս:
- Ոչ միայն ես, այլ նաև յու դատաւորներդ:
- Ո՛վ Աստուած իմ, կրնամ՝ աւելի գժբախտ լինել,
- Խոստովանէ. և ոչ միայն ազատութիւնդ, այլ նաև իմ ունեցած բոլոր  
 հարաստութիւնն՝ խոստովանութեանդ վարձե պիտի լինին... հապա...  
 — Գուրս ել, տիկին, ել գնաւ: Դուռ րոնի իմ ժատապարտութիւնն կ'ո՛գ  
 զիս ինձմէ: Դեռ գոչ չեղար յափշտակելովդ ինձմէ սեփական ժառանգու-  
 թիւնս, եկած ես Հիման նաև զուարձանալու վայրենի յաղթութեանդ վրայ:  
 Այս, պիտի մեռնիմ ես. բայց այն ահաւոր տանջանաց մէջ աշ պիտի կարե-  
 նամ գոշել որ անմեղ զատապարտուեցայ, և թէ գուն մահս երագեցիր:  
 չարութեամբ ձեռք բերած հարստութիւններդ անխռով վայելելու հա-  
 մար.... Բայց պիտի տեսնես, տիկին, շարունակեց եղկելին ներքին հաս-  
 տատուն համոզման ձայնով մը, պիտի տեսնես՝ որ բիշ ատենէն ամէն ար-  
 տաքին երեցած փաստերն սուսու պիտի ելլին. և ես ձեռք պիտի բերեմ այն  
 ազատութիւնն՝ ուսկից զիս զրկեցիր. և թէ՝ որ մը պիտի կարենամ կրկնակի  
 մարդապան կոչել գքեղ:
- Տիկին... վրայ բերաւ ձելթրուտ անհրհսաբար, իրրե վիրաւորուած  
 կին մը. մոսածէ ով ես դուն և ով եմ ես: Ո՛վ կրնար որդիս յափշտակել,  
 եթէ ոչ գու միայն, որ մօրեղորդ ժառանգութեան տէր զառնաս:
- Գուրս եփիր, տիկին. դեռ աւելի մի գրապարտեր զիս: Եատ իսկ համբե-  
 րեցի, աւ չեմ կրնար դիմանալ ներկայութեանդ:
- Ուզածիդ չափ յամառ եղիր, ըստ ձելթրուտ, լի ատելութեամբ նա-  
 յուածք մի ձգելով իւր զոկին վրայ. շատ լաւ, կը տեսնենք: Տանջանքը պի-  
 տի կարող լինի հանել բերնէդ այն խոստովանութիւնը զոր չկրցայ:
- Այս ըսելով գուրս ելաւ բանտէն, և աճապարեց իմաց ապար քառաս-  
 նից Ատենապետին՝ իւր բանտարկելոյն հետ ըրած խոսակցութեան անցա-  
 լող ելքը:

## ԳԼՈՒԽ ՏԱՄԱՆԵՐՈՐԴ

### Խելքը բռուցահն

Մինչդեռ ձէլթրուտ՝ Քարամնից Այսինապետին հետ կը զրուցէր, (որ յետ լսելու ինչ որ բանտարկեալն պատասխանիր էր, հրաման հանած էր զվիկոտրինէ տանջանաց փորձին ենթարկելու), ամբաստանելոյն խղիկին մէջ կը մտնէր Գէորգ, որ քիչ յառաջ անօրինութիւն տռեր էր տեսակցելու իւր կնոջ հետ՝ բանտապահին հսկողութեան ներքեւ:

Յետ առաջին սիրոյ ցոյցերու, այն երկու թշուառներն սկսան խօսի՛ ամէն բանէն աւելի իրենց հաճելի նիւթոյն վրայ. և ինչպէս ամէն որ կրնայ գուշակել, Վիկոտրինէ տեղեկութիւններ ուղեց իւր ամուսնէն իրենց տղուն վրայօք, համարելով եղիկի մայրն որ իւր այլն զինքը Դարմանոցին առած լինի:

Այսպիսի հարցման մը վրայ Գէորգ չէր գիտեր ինչ պատասխանէ. բայց միւս կողմէն ալ ու զեղով իրին ստուգութիւնն իմանալ, ըսաւ.

— Ահաւասիկ, Վիկոտրինէ. ուղեցի աեսնել զեղող ոչ միայն քու առողջութեանդ, քու գատաստանիդ ինչ կերպ առաջ տարուելուն վրայ տեղեկանալու համար, այլ նաև մեր սիրուն որդույն վրայօք խօսելու համար:

— Ալպիկ, Գէորգ. խօսէ ուրեմն մեր որդույն վրայ, կանցեց մի ուրախութեամբ իսկէն. Ա՛յ, գիտնայի՛ր թէ ո՞րշաբ կը ցաւիմ զինքը աեսնել չկարենալուն համար: Գիտցիր, սիրուն Գէորգս, գիտցիր որ այս բանալուն կու գայ ինձի՞ մանաւանդ քիզի և որդույս համար... Ըսէ ուրեմն առողջ է մեր տպան. գեղեցիկ է. ինչո՞ւ համար զինքն ալ հետք շբերիր... ան, թէ կարենայի տեսնել զինքը...

— Լսէ, Վիկոտրինէ, պատասխանից Գէորգ, զուր տեղ ջանալով ձայնին այլայլութիւնը պարտըկել. ձախորդ լուր մը լսելու քաջութիւն ունին:

Վիկոտրինէի գոյնը նետեց, և ձեռքերը գլխուն մազերուն մէջ լսօթելով, հարցուց.

— Ի՞նչ, մեռա՞:

— Ոչ, պատասխանից Գէորգ:

— Լաւ ուրեմն, ըսէ, խօսէ. ինչ եղած է որդւոյս:

— Վիկոտրինէ, սիրուն առաջ չերթար ըսելու:

— Հիւանդ է արգեօք:

— Եւ ոչ:

— Ուրեմն ինչո՞ւ համար կը վշտանաս:

— Ահաւասիկ, պատասխանից էրիկն, գժուարութեամբ հնչելով բառերը. Տղան Դարմանոցը չէ:

— Է՛ս, բայց Վիկոտրինէ բոլորովին ապուշ գարձած, խարուած ես:

— Երանի թէ խարուած լինէի:

— Նշանները կեցեր են:

— Զկան այդպիսի նշաններ Դարմանոցին վարչութեան քով:

— Բայց Գննովափէ գայեակն՝ որ զինքը Դարմանոց տարաւ...

— Մեռած է:

— Մեռած է... այս, սիրելի Գէորգս... խելքս գլխէս կ'երթայ, պատաս-

խանեց ցնորելով իհեղճ մայրն .որոյ աշքերն կրեղէն փայլակներ կ'արձը-  
կէին, և զարհուրած կը տնկուէին էրկան վրայ, որ հարցուց իրեն .

- Մինա՞կ էիր՝ երր տղան զայեկին յանձնեցիր,
- Մինակ, պատասխանեց մեքենայարար կին:
- Դեկտեմբեր 20ին, երեկոյւան ժամը ինչին էր:
- Այս...

— Ասո՞նք էին այն նշանները, զորս դրիր տղուն կապերուն վրայ, հար-  
ցուց Գէորգ ցուցընելով զանոնք կնկանը, որ ապուշ նայուածքով վայրկեան  
մը զիտեց զանոնք և ըսաւ. Ասոնք էին:

— Լաւ ուրեմն, ըսաւ Գէորգ, (առանց ուշ գնելու որ կնոջը դէմքին վրայ  
յանկարձական փոփոխմունք կատարուեր էին), մեր որդին առանց ամենե-  
ւին տարակոսսի կորսուած է:

— Կորսուած, սրտամիլիկ ձայն մ'արձակեց մայրն: Խակ գուն ամենեին  
ցաւ չես զգար, իսկ գուն ամեննեին հոգ չմո ըներ...

— Ո՛չ, յիրաւի կը ցաւիմ, պատասխանեց Գէորգ, այս անգամ զննելով  
կնոջ դէմքը, տեսնելով զայն դունաթափ և աշքերը կարծիս իրենց խորչէն  
գուոր ցաւքելով:

— Զէ, չէ, կարելի բան չէ, ըսաւ Վիկտորինէ. սուտ ըսիր... գու բնաւ  
սէր չես զգար...

— Ի՞նչպէս, Բնէ Կըսես, պատասխանեց Գէորգ ինքնիրմէն գուրս ելած  
և կնոջը մօտենալով:

— Բայց ինչո՞ւ չես երթար զինքը առնելու, ըսաւ իրեն կինն սիրալիր յան-  
դիմանական ձայնով. տղայ մի զոր գետ չես տեսած... որ քու որդիդ է...  
Զարասէրտ... գնա շուտով. հոս բեր զինքը... Կուզեմ զինքը տեսնել. Կը  
հասկունաս...

— Տէր Աստուած... Վիկտորինէ... քու խօսելու կերպգ...

— Մանաւանդ թէ ոչ... կեցիր, ես երթամ կարմանց մեր որդին առնե-  
լու... տեսնես որ ինձի պիտի տան: — Այս խօսքերս ըսելով՝ երթալ կ'ու-  
զէր, բայց ոտքերը վլնիք չէին կրնար բռնել. և քանի մը քայլ առնելով ին-  
կաւ առնաւնոյն բազկացը մէջ, որ վազեց բռնելու զինքը. և կնաւու գոշել.  
Չեմ կրնար... չեմ կարող... չերմ ունիմ, զլուխս կ'այրի... կուրծքս կը  
բորբորի... Այս, որդիս... որդիս... Հառաշեց, և ընկաւ խշտեկին վրայ,  
ընդհատ ընդհատ կորսուած տղան կանչելով:

Եղկելին խելքը թոռւցեր էր:

Այս վայրկենին բանտին զրան առջև ներկայացաւ Ատենին խորհրդա-  
կաններէն մին, ձեռքը բացուած թուղթ մի կրելով և հետը քանի մը զի-  
նուորք, որք այն տեսարանին հանդիպելով կանգ առին և խորհրդականն  
հարցուց Գէորգի եղած չեղածը.

Խեղճ ամուսինն, ընկճեալ ցաւ երէ. պատմեց պաշտօնէին մանրամասն ո-  
ճով՝ ահաւոր գէպքը. Ուստի չուտ մը թժիկ կանչել տուին և Գէորգը բան-  
տէն դուրս հանելով՝ եղածը Քառասնից Ատենապէտին ականջն հասուցին.

Հանդիպածն իմանալով՝ պաշտօնեայն քանի մը տող զրեց խորհրդական-  
ին ձեռքն եղած թզթոյն վրայ և կրամայեց որ բանտարկեալը բանտին հի-  
ւանդանոցը տանին, ուր հոգ տարուի իրեն՝ պարագային պահանջածին  
համեմատ:

Խորհրդականին բերած հրամանն էր զՎիկտորինէ տանջանաց փորձին  
ենթարկելու պատուէրն: